

նին¹, ի հնդետասաներորդում շրջանակի ամացն, յամեսանն յունի, որ է մարերի, որ աւր քսան եւ ինն էր ամոյն:

Եւ ես ստոյգ նշանակեցի զժամանակ վկայութեանն Պաւղոսի: — Տունք ժ²:

Ա յիններորդում ամին ինդ.: 22 ունին Լնդիտիւնն, Բ Լնդիտիւնն, ուղղեցի || 1 ԱԲԳ Ի հինդե- տասաներորդում, Ե ի հինդետասաներորդի: Ը ամաց, յոյնը չիք ամացն: Գ ի յամեսանն ընթեր- ցուածը Սարգիսեան կը կարգայ ամեսանն Եւազր, ճԺԸ: Ա: յունիս: Ե չիք որ է մարերի || 2 Բ յինն: Ե չիք ամոյն || 3 Ծ զժամանակս: Բ եւ Սարգիսեան իբր ընթերցուած Գ ի վկայութեան: Լ Պաւղոսի առաքելոյ:

Իսկապէս հայաշունչ տիպ ու ձեւ՝ «զի պահեսցի ի Կալի արանցն յանդիմանութիւն» եւ «գորա ինքնին բողոք կալեալ առ Կալի արանցն», ԻԵ, 21 եւ 25. հմմտէ Նորայր, Կորին ղարդ., էջ 109—110:

¹ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆՆ «Լնդիտիւնն (այսպէս 37 եւ 38, իսկ 36 Լնդիտիւնն). ԸԺ. բոս յունաց թուականին ժե ամ է (այսպէս 37 եւ 38, մինչ 36 ասէ), որպէս առաջիկայս: Յայտմ ժամանակի եղև եւ ցանկ Պաւղոսի թղթոցն», Որոտ., թղ. 6ա:

² ԲԱՌԱՔՆՆՈՒԹԻՒՆՆՆՆ Ինչպէս վերն արդէն մատնանշեցինք վկայութեանս տնահամարը շէն պահած հայ ձեռագիրները. իսկ յոյնին στίχοι ες՝ կը գտնուի in Cryptoferratensi tantum codice, Որոտ- նեցին սակայն կ'աւանդէ մեզի պակաս այս տնահամարը իր Մեկնութեան մէջ ինչպէս պիտի տեսնենք գրելով «եւ որոն որոն է որ ասէ այն վկայութիւն Պաւղոսի առաքելո. առ Ներոնի կայսերի հռոմայեց- ւոց մինչեւ ցայն թէ ստոյգ նշանակեցի զժամանակ վկայութեան առաքելոյն Պաւղոսի», թղ. 8ա:

(Շարունակելի:)

Ջ. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ս Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Յ Ո Ւ Ն Ա Ր Ա Ն Գ Պ Ր Ո Յ Ը

ԵՒ

Ն Ր Ա Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Շ Ր Զ Ա Ն Ն Ե Ր Ը

Ն Ե Ր Ա Ժ Ո Ւ Թ Ի Ի Ն

(Շարունակութիւն:)

§ 15. Գրիգոր Մագիստրոսի վկայութիւնը Ոլիմպիոսորոսի ինչ որ աշխատութեան հայերէն խորհ- մանութեան մասին: — Յովհաննէս Որոտնեցուց անկախ՝ Ոլիմպիոսորոսի ինչ որ երկի հնագոյն հայերէն թարգմանութեան մասին հաղորդում է Գրիգոր Մագիստրոսը «առ վարդապետն Սար- գիս» ուղղուած իր նամակում: «Բայց եւ գտեալ մեր իսկ ի հայ լեզու, — գրում է նա, — գրեալ թարգմանչացն՝ զգիրս Ոլիմպիոսորոսի, զոր Գա- լիթ յիշատակէ, կարի յոյժ սքանչելի եւ հրա-»

շալի բանաստեղծութիւնս մակաւասար բոլոր իմաստասիրական բանիցն¹:

«Զգիրս Ոլիմպիոսորոսի, զոր Գալիթ յի- շատակէ», կարծում ենք, որ Էլիասին ընծայուած Ստորոգութեանց մեկնութեան հինց այն հայե- րէն թարգմանութիւնն է, որից քաղուած օրէն օգտուել է Յովհաննէս Որոտնեցին:

Մագիստրոսի հաղորդած տեղեկութեան մէջ ուշադրաւ մի կէտ կայ: Ոլիմպիոսորոսի գրուածքի հայերէն թարգմանութիւնը նա հա- մարում է «թարգմանչաց» գործ: Ինչպէս կը տեսնենք, թարգմանութեան մասին այդ տեղե- կութիւնը միանգամայն սխալ է, եթէ «թարգ- մանչաց» տակ հասկանանք Սահակ-Մեսրոպի աշակերտներին:

Մագիստրոսի վկայութեան մէջ ուշադրու- թեան արժանի է սակայն նրա նկատողութիւնը, որ իր գտած թարգմանութիւնն այն Ոլիմպիո- սորոսի աշխատութիւնն է, որին յիշատակում է Գալիթ փիլիսոփան: Եւ իրօք Նորպաղատոնական Գալիթ մեկնիչը «Սահանք իմաստասիրութեան»

¹ Տես Վ. Կոստանեանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ 1910, էջ 66:

իր երկուսն էր կու անգամ յիշում է «Ողմպիո-
դորոս փիլիսոփոսին»¹ եւ իմաստասիրական մի
քանի հարցերի մասին առաջ բերում նրա
վկայութիւնները:

Արդ՝ Ողմպիոդորոսի այդ վկայութիւնները,
ինչպէս կը տեսնենք, գտնուում են հենց Էլիասին
ընծայուած Ստորագութեանց մեկնութեան մէջ,
այն էլ՝ ոչ իբրեւ այլուստ առաջ բերուած քա-
ղուածքներ, այլ որպէս սեպհական հայեացքներ
մեկնութեան հեղինակի:

Հատ պարզ է, ուրեմն, որ Մագիստրոսի
«զգիրս Ողմպիոդորոսի զոր Գաւիթ յիշատակէ»
վկայութիւնը վերաբերուում է Էլիասին ըն-
ծայուած Ստորագութեանց մեկնութեանը: Միան-
գամայն պարզ է նաեւ այն, որ Գրիգոր Մա-
գիստրոս եւս, ինչպէս եւ Յովհաննէս Որոտնե-
ցին, նոյն այդ երկը համարել է ոչ թէ Էլիասի,
այլ Ողմպիոդորոսի աշխատութիւն:

Ինչ թւում է, որ Մովսէս Խորենացու յի-
շած² Ողմպիոդորոս փիլիսոփան եւս նոյն այս
Ողմպիոդորոսն է: Խորենացու ասելով՝ Ողմ-
պիոդորոսն այն կատարելագոյնն էր իմաստասէր-
ներու մէջ, որոնց մօտ սովորում էին հայերը
փիլիսոփայութիւն: Այս վկայութիւնը վերա-
բերուում է, իմ կարծիքով, ոչ թէ հինգերորդ
դարի պատմագիր Ողմպիոդորոսին, այլ Աղեք-
սանդրիացի երկու Ողմպիոդորոս փիլիսոփաներից
մէկին:

Աւելի քան հաւանական է, որ Խորենացու
վկայութիւնը վերաբերուում է նորպղատոնական
Գաւիթ մեկնիչն ուսուցիչ՝ կրտսեր Ողմպիոդո-
րոսին: Սա է այն «կատարելագոյն» Փիլիսոփան,
որ մեծ հռչակ է ունեցել Հայաստանում: Սրա
փիլիսոփայական դպրոցից են ծագում հայերէն
թարգմանուած իմաստասիրական երկերի մեծա-
գոյն մասը: Այդ երկերի թարգմանները կարող
էին, իրօք, աշակերտած լինել կրտսեր Ողմպիո-
դորոսի կամ նրա յաջորդների մօտ: «Օργανονի
երկերը եւ նրանց վերաբերեալ մեկնութիւնները
թարգմանելու համար բաւական չէր, անշուշտ,
յունարէն լեզուն միայն իմանալ, այլ հարկաւոր
էր ունենալ փիլիսոփայական լուրջ նախա-
պատրաստութիւն: Յունարան դպրոցի առաջին
թարգմանիչները կարեւոր այդ նախապատրաս-
տութիւնը կարող էին ձեռք բերել իրանց ժա-
մանակակից յունարէն դասաւանդող իմաստա-
սէրների մօտ:

Փիլիսոփայութեան պատմութիւնից յայ-
տնի է, որ զանազան ազգերի զրոյցները հաւա-
քել ու այլարանօրէն մեկնել են, գլխաւորապէս,
նորպղատոնական իմաստասէրները: Խորենացու
խօսքերը՝ «ոմանք այլազգաբար եւ ոմանք այլա-
բանարար զրոյցս մատենից տային», կարող են
վերաբերուել աւելի շուտ նորպղատոնական մեկ-
նիչ իմաստասէրների միջավայրին, քան Ողմ-
պիոդորոս պատմագրին:

Խորենացու վկայութեան բոլոր ակնարկ-
ները, ինչպէս տեսնում ենք, համապատասխան
են ու յարմար Գաւիթ մեկնիչն ուսուցիչ կրտսեր
Ողմպիոդորոսի համար՝ նոյն Ողմպիոդորոսի, որին
յիշում են նաեւ Գրիգոր Մագիստրոսը եւ Յով-
հաննէս Որոտնեցին:

§ 16. Գաւիթ մեկնիչն Էլիասին ընծայուած
Ներածութեան մեկնիչն է եղել Էբրե-
Ողմպիոդորոսի աշխատութիւն: — Յովհաննէս
Որոտնեցու եւ Գրիգոր Մագիստրոսի վկայու-
թիւններն արժանի են խոր ուշադրութեան:
Թէեւ Բուսէն Արիստոտելի Ստորագութեանց
վերոյիշեալ մեկնութեան հեղինակ համարում է
Էլիաս մեկնիչին, որին վերագրում է նաեւ իր
լոյս ընծայած Պորփիւրի Ներածութեան մեկնու-
թիւնը, թէեւ նա իր այդ ենթադրութիւնը պատ-
ճառաբանում է լուրջ ու հիմնաւոր փաստերով,
սակայն, ինչպէս տեսանք, կայ ուշադրաւ մի
կուռան, նոյն երկերը վերագրելու Ողմպիոդորոս
մեկնիչին՝ այն Ողմպիոդորոսին, որը յիշում է
Գաւիթ Սահմանք իմաստասիրութեան երկում:

Ըստ երեւոյթին, Որոտնեցու ու Մագիս-
տրոսի տուած տեղեկութիւնները, որ չեն համա-
պատասխանում Ա. Բուսէի յունական աղբիւր-
ներից հաւաքած գիտողութիւններին, այնքան
էլ անհիմն չեն:

Գաւիթ մեկնիչն ինքն եւս օգտուել է
Էլիասին ընծայուած Պորփիւրի Ներածութեան
մեկնութիւնից, բայց ոչ իբրեւ Էլիասի, այլ
իբրեւ Ողմպիոդորոսի աշխատութիւնից: Ապա-
ցոյց դրան Սահմանք իմաստասիրութեան երկում
Ողմպիոդորոսից մէջ բերուած հատուածը, որ
գտնում է Էլիասին ընծայուած Պորփիւրի Ներա-
ծութեան մեկնութեան մէջ՝ Προλεγόμενα τῆς
φιλοσοφίας առաջաբանում:

Սահմ. իմաստ., 1833, Eliae in Porph. Is., էջ 14.
էջ 164.

«Էւ պարտ է գիտել, Եβουλόμην δὲ τούτων
էթէ ոմն Աղէմբուոսոս τῶν λόγων ἀκοῦσαι Κλεόμ-
ամբուակիացի կարծելով, βροστον· οὗτος γὰρ περιουσί-
էթէ Պղատոն զընաւորա- σασ τὸ ἐν Φαίδωνι ῥητόν

¹ Տէս վեներսիկ 1833, էջ 143 եւ 164:
² Տէս պատմութիւն Հայոց, Տփղիս 1913, էջ 2, 22,
25 եւ 212:

կան մահուանէն հրամայե-
 խողալ իմաստասիրին. ըն-
 կեցեալ զինքն ի պարսպէն
 վախճանեցաւ. վասն որոյ
 վասն կալիմաքոս. «Ո՛րա-
 Խոսիք ո՛վ արեգակն,
 Աղէսմբռնոտոս ամբռակի-
 ցի վաղեալ ի բարձրաբերձ
 պարսպաց ի դժոխս. ար-
 քանի ինչ ոչ ուսեալ մա-
 հու. այլ շար զՊղատոնի
 դադադոս հոգւոյ զինն ըն-
 տրեալ»¹:

Այս պոստիկ ասայ Ողբմ-
 պիտորոս փիլիսոփոս. «Ե-
 թէ ոչ պղատոնական գիրն
 զիմն նահանջէր զարձա-
 կուսն. այն ինչ ահա տա-
 ժանաբար լուծանէի զյո-
 բնաթախանձ կապ կենցա-
 ղս»¹:

Ներածութեան մեկնութիւնից առաջ բե-
 րուած յունարէն այս հատուածում էի մի
 յրճումա եւն խօսքերը հեղինակի սեփական
 դատողութիւնն է, ինչպէս այդ պարզ վկայում
 է ինքը մեկնիչը:

Արդ՝ նոյն այդ խօսքերը, ինչպէս տեսնում
 ենք, Գաւթի վերագրում է ոչ թէ Էլիասին,
 այլ Ոլիմպիոգորոս փիլիսոփային: Ուրեմն՝ Գաւ-
 թի այս շատ որոշ վկայութիւնից կարելի է եզ-
 րակացնել, որ նրան ներածութեան մեկնութիւնը
 յայտնի է եղել իրրեւ Ոլիմպիոգորոսի երկ եւ
 ոչ Էլիասի:

Ա. Բուսէն, միանգամայն հաւատ ընծայե-
 լով Գաւթի վկայութեանը եւ էի մի յրճումա եւն
 խօսքերը համարելով նոյնպէս Ոլիմպիոգորոսինը,
 կարծում է, որ ներածութեան մեկնութեան
 յունարէն ձեւագրի արտագրողը քաց է թողել
 ἐγὼ δὲ τὰναντία ἐκείνω φημί ἔπη οὕτως հա-
 տուածում ὡς φησιν Ὀλυμπιόδωρος խօսքերը²:

Սակայն այս բանագրութի սրբագրութիւնը,
 որ խիստ վիճելի է ու կասկածելի, իմ կարծի-
 քով, անհաւանական ու անհիմն պէտք է հա-
 մարուի, որովհետեւ համապատասխան Գաւթի
 վկայութեանը հայ մատենագիրները եւս, ինչպէս
 տեսանք, մատենաշում են Ոլիմպիոգորոս մեկնի-
 չին, իրրեւ հեղինակ Էլիասին ընծայուած Ստո-
 րոգութեանց մեկնութեան:

Ճիշտ է նրանց վկայութիւնը վերաբերում
 է միայն Ստորագրութեանց մեկնութեանը, սակայն

Ἐγὼ δὲ τὰναντία ἐκείνω
 φημί ἔπη οὕτως· εἰ μὴ γράμ-
 μα Πλάτωνος ἐμὴν ἐπέδη-
 σεν ἐρωτήν, ἥδη λυγρὸν ἔλυ-
 σα βίον πολυκηδέα δεσμόν.

քանի որ ներածութեան մեկնութիւնը եւս միեւ-
 նոյն հեղինակի գործ է եւ Գաւթի այս վերջի-
 նից օգտուել է իրրեւ Ոլիմպիոգորոսի աշխատու-
 թիւնից՝ ուրեմն եւ Որոտնեցու ու Մագիստրոսի
 վկայութիւնները կարող են կառուած ծառայել
 Գաւթի տեղեկութեան հիմնաւոր լինելուն, ինչ-
 պէս եւ Գաւթի ցուցումը կարող է ապացոյց
 ընդունուել նրանց հաղորդած վկայութիւնների
 ճշտութեան:

Գաւթի «Սահմանք իմաստասիրութեան»
 երկում առաջ է բերուած նաեւ Ոլիմպիոգորոս
 փիլիսոփայի կարծիքը սահմանների որոշ առանձ-
 նայատուութիւնների մասին: Արդ՝ այդ հատուածը
 եւս, իմ կարծիքով, համապատասխանում է
 դարձեալ Սահմանի նման լուսարանութեանը,
 որ գտնում է Էլիասին վերագրուած ներածու-
 թեան մեկնութեան մէջ:

Սահմանք իմաստ., էջ 143. Eliae in Porph. Is., էջ 5.

«Դսկ յորժամ նուազէն Καὶ θαναστός ὁ τῆς
 բառք՝ առաւելուն իրքη κακίας τῶν ὀρισμῶν τρέ-
 որդոն՝ մարդ կենդանի բա- ποσ· εἰ τε γὰρ ἔλλειψουσι τῇ
 նական. ահա նուազեցին բա- λέξει, τῷ πράγματι πλεονά-
 բառք՝ եւ յաւելան իրքη: ζουσι, εἰ τε πλεονάσωσι τῇ
 Ղասն զի ոչ միայն մարդ- λέξει, τῷ πράγματι, τῷ
 է կենդանի բանաւոր. այլ ὀριστῷ φημι, ἐλλείπουσιν·
 եւ հրեշտակք եւ դէք. եւ որպէս ասէր Ոլիմպիոգորոս οἶον ὡς ἵνα εἶπω ὁ ἀνθ-
 փիլիսոփոս՝ եթէ սքանչելի ὄρωπος ἔζῳν, ἰδοὺ τῇ λέξει
 իմ եզրիս բնութիւնս. ἐνέλειπον, ἐπλεόνασα δὲ τῷ
 նուազութիւն հարստա- πράγματι συμπεριλαβῶν ἀγ-
 ցեալ եւ հարստութիւն γέλους καὶ ἄλλα ἔφα.
 կեղծաւորեալ գնուազու-
 թեանցն»¹:

Ինձ թւում է, որ Գաւթի վկայութիւն-
 ները եւ վերոյիշեալ բաղդատութիւններն այն-
 քան պարզ են ու որոշ, որ կարօտ չեն բունագ-
 րութի ու վիճելի սրբագրութիւնների: Եթէ ճիշտ
 են այս դիտողութիւնները, շատ պարզ է որ
 ներածութեան ու Ստորագրութեանց վերոյիշեալ
 մեկնութիւնները պէտք է համարուեն Ոլիմպիո-
 գորոս փիլիսոփայի աշխատութիւն:

§ 17. Հայ մարտիրոսական առեգութեան ե-
 Ա. Բուսէի եզրակացութեան հակասութիւնները կարելի
 է վերացնել, եւնադրելով Էլիաս-Ոլիմպիոգորոսին
 միեւնոյն անչք: — Գաւթի վերոյիշեալ վկայու-
 թիւնները, ինչպէս եւ Յովհաննէս Որոտնեցու
 ու Գրիգոր Մագիստրոսի պարզ ու որոշ տեղե-
 կութիւնները անկարելի է առանց լուրջ հիմ-
 քերի ժխտել կամ անտես առնել: Միւս կողմից՝

¹ Տես նաեւ յունարէն բնագիրը՝ Davidis Prolego-
 mena, ed. A. Busse, էջ 31—32:
² Տես A. Busse, Eliae in Porph. Isag., էջ VII:

¹ Տես նաեւ յունարէն բնագիրը՝ Davidis Prolego-
 mena, ed. A. Busse, էջ 16:

բաւարար հիմք չունենք մերժելու նաեւ Ա. Բուսէի եզրակացութիւնը, որը Ներածութեան ու Ստորագութեանց մեկնութիւնները Էլիաս մեկնիչին ընծայելու համար, ինչպէս տեսանք, ունի ուշագրաւ փաստեր ու կռուաններ:

Կարծում եմ, որ հնարաւորութիւն կայ հաշտեցնելու հայկական աւանդութեան տուեալները Բուսէի ներհակ ու անհամաձայն թուացող եզրակացութեան հետ հաւանական մի նոր ենթադրութեամբ, որը սակայն կարօտ է յատուկ քննութեան յունական աղբիւրների օգնութեամբ:

Ա. Բուսէի կարծիքով՝ Էլիասը վերոյիշեալ իր մեկնութիւնները գրելու ժամանակ դեռեւս քրիստոնէութիւն ընդունած չէ եղել¹: «Atque etiam Eliam, cum has scholas habebat, — ասում է նա, — fidei christianae non fuisse addictum, ex verbis (p. 66, 4) 'καὶ λέγομεν ὅτι οὐκ ἄτοπον τὸν θεὸν σῶμα εἶναι. τὰ γὰρ οὐράνια κατὰ Ἀριστοτέλην θεοὶ διὰ τὸ θεεῖν ἀεὶ καὶ κινεῖσθαι' luculenter apparet»²:

Ի նկատի առնելով կարեւոր այս հանգամանքը, կարելի է ենթադրել, որ Էլիասի հիթանոսական անունը եղել է Ուլիմպիոգորոս: Յովհաննէս Փիլղոսոսը, որ վեցերորդ դարի քրիստոնէայ մեկնիչներից է, վերոյիշեալ իր վկայութեան մէջ գերադասութիւն է տուել, բնականաբար, նրա քրիստոնէական անունը, իսկ հայ մատենագրութեան մէջ նոյն Էլիասի երկերը յայտնի են եղել, իբրեւ Ուլիմպիոգորոսի աշխատութիւն: Գաւթի վկայութիւնները վերաբերում են, ուրեմն, Ուլիմպիոգորոս-Էլիասին, որը նոյն ինքն կրտսեր Ուլիմպիոգորոսն է, Գաւթի մեկնիչի ուսուցիչը:

Այս ենթադրութեան դէմ կարող է լինել մի լուրջ առարկութիւն: Ուլիմպիոգորոսի անունը կրող Ստորագութեանց մի այլ մեկնութիւն գոյութիւն ունի արդէն եւ Ա. Բուսէի հրատարակութեամբ լոյս է տեսել Բերլինում 1902 թուին³: Այս գժուարութիւնը սակայն այնքան էլ անյաղթելի չէ:

Իմ կարծիքով, Ուլիմպիոգորոսի այդ մեկնութիւնը, որ պահպանուած է միայն մէկ ձեռագրում (Cod. Mutensis 69), պէտք է վերագրուի կամ մի այլ Ուլիմպիոգորոսի, կամ մի այլ մեկ-

նիչի, կամ կարող է լինել նոյն այս Ուլիմպիոգորոս-Էլիասի մեկնութիւն, բայց դասաւանդուած նրա դպրոցական գործունէութեան մի այլ շրջանում: Ստորագութեանց երկու այս մեկնութիւններն իրանց բովանդակութեամբ ու մտքերի դասաւորութեամբ այնքան մօտ են իրար, որ անհնարին չէ ենթադրել, որ նրանք միեւնոյն դասախօսի մեկնութիւններ են, կարգացուած ու գրի առնուած ուսանողների կողմից տարբեր ժամանակ: Փիլիսոփայութեան պատմութիւնից յայտնի է, որ կրտսեր Ուլիմպիոգորոս փիլիսոփան ունեցել է երկար կեանք եւ եղել է փիլիսոփայութեան ուսուցիչ մինչեւ 92 դարի վախճանական թուականները: Շատ բնական է, որ նրա դասախօսութիւնների բովանդակութիւնը եւ ծաւալը կարող էին նոյնը չլինել նրա դպրոցական երկարատեւ գործունէութեան զանազան շրջաններում:

Էլիասին ընծայուած Ստորագութեանց մեկնութիւնը, լինելով իր բովանդակութեամբ շատ աւելի ընդարձակ ու մանրազնին քան Ուլիմպիոգորոսի վերոյիշեալ մեկնութիւնը, կարող է թերեւս համարուել միեւնոյն Ուլիմպիոգորոս փիլիսոփայի մեկնութիւն, դասաւանդուած ու գրի առնուած նրա դպրոցական գործունէութեան աւելի ուշ շրջանում:

§ 18. Ուլիմպիոգորոս-Էլիասին մեկնոյն աշխատութեամբ՝ հարեւոր էն մի շարք վեցէկ խնդիրներ: — Վերոյիշեալ ենթադրութիւնն ուշագրաւ է այն տեսակետից, որ այդ ենթադրութեամբ ոչ միայն վերանում են այն անբացատրելի հակասութիւնները, որ վերեւ մատնանիշ էինք արել, այլ հարթւում ու պարզւում են նաեւ մի քանի մութ ու վիճելի խնդիրներ Գաւթի, Էլիասի ու Ուլիմպիոգորոսի նկատմամբ:

Ինչպէս յայտնի է, Ա. Բուսէն, որ իր նախկին աշխատութիւններում Գաւթին ու Էլիասին համարում էր ժամանակակից մեկնիչներ եւ Ուլիմպիոգորոսի աշակերտներ, Գաւթի երկերի հրատարակութեան իր առաջաբանում¹, նրանց երկերի մանրազնին քննութիւնից յետոյ, հարկադրուած էր փոխելու իր նախկին կարծիքը եւ ենթադրելու, որ Ուլիմպիոգորոսի աշակերտ եղել է Էլիասը, իսկ Գաւթիը եղել է այս վերջինիս աշակերտը եւ ապրել վեցերորդ դարի վերջում եւ եօթներորդ դարի սկիզբներում:

Գաւթի Անյաղթի մասին իմ աշխատութեան մէջ, ինչպէս եւ Մ. Խոստիկեանը David

¹ Տե՛ս նաեւ K. Krumbacher, Geschichte der byz. Literatur, 2. Auflage, München 1897, էջ 432:
² A. Busse, Eliae in Porph. եւն էջ X:
³ Olympiodori Prolegomena et in Categorias Commentarium, ed. A. Busse, Berolini 1902:

¹ A. Busse, Davidis Prolegomena եւն, p. V—VI:

der Philosoph իր քննաճառում, հակառակ Ա. Բուսէի այդ վերջին ենթադրութեան, հիմնուելով մի շարք այլ դիտողութիւնների վրայ, ընդունել էինք Գաւթին կրտսեր Ոլիմպիոդորոսի աշակերտ:

Արդ՝ այդ հակասական եզրակացութիւններն իրանք իրանց վերանում են ու վիճելի խնդիրը հեշտութեամբ պարզուում, եթէ հաւանական համարուի Ոլիմպիոդորոս-Էլիասի միեւնոյն անձ լինելը:

Բացի այդ, խիստ օտարտի էր թւում, որ Փիլոպոնոսը, որը քաղուածքներ է անում Ժամանակակից մեկնիչների երկերից եւ յիշում Դրանց, կրտսեր Ոլիմպիոդորոս մեկնիչին, որ ակաւաւոր տեղ է բռնում մեկնիչների շարքում, ոչ յիշատակում է, ոչ էլ օգտուում նրա մեկնութիւններից:

Եթէ Էլիասը քրիստոնէութիւն ընդունած նոյն ինքն Ոլիմպիոդորոսն է, այդ դէպքում շատ պարզ է, թէ ինչո՞ւ Յովհաննէս Փիլոպոնոսը, յիշելով Էլիասին, չէ յիշում նաեւ Ոլիմպիոդորոսին:

Ոլիմպիոդորոսի Ներածութեան մեկնութիւնը համարուում է կորած: Արդ՝ եթէ վերոյիշեալ մեր ենթադրութիւնը ճիշտ լինի՝ Էլիասին վերագրուած Ներածութեան մեկնութիւնը պէտք է ընդունել նոյն ինքն Ոլիմպիոդորոսի աշխատութիւն:

Վերջապէս՝ Էլիաս-Ոլիմպիոդորոսին միեւնոյն անձն ընդունելով, ինքն ըստ ինքեան հասկանալի է դառնում, թէ ինչո՞ւ Էլիասը եւ ոչ մի անգամ չէ յիշատակում Ոլիմպիոդորոսի անունն իր երկերում:

Ոլիմպիոդորոս-Էլիասի միեւնոյն անձ լինելու մասին սոյն ենթադրութեան վրայ հրաւերում ենք այն բանասէրների ուշադրութիւնը, որոնք հնարաւորութիւն ունեն օգտուելու եւրոպական հարուստ գրադարանների նիւթերից: Ի նկատի ունենալով վերոյիշեալ նոր ենթադրութիւնը, որ հիմնուած է հայկական տեղեկութիւնների վրայ, հարկաւոր է, իմ կարծիքով, նորից քննութեան առնել յունաց մատենագրութեան տուեալները, որոնց մէջ կարող են թերեւս գտնուել անուշադիր թողնուած նոր վկայութիւններ կամ որոշ ակնարկներ, նպաստաւոր այս խնդրի վերջնական լուծմանը:

Երեւան:

ՊՐՈՓ. Յ. ՄԱՆԱՆԴԵԱՆ

(Շարունակելի:)



UN PROCÉDÉ HAGIOGRAPHIQUE

C'est un procédé très ordinaire chez les hagiographes du moyen âge de présenter la persécution que les chrétiens ont à subir, sous les couleurs les plus sombres.

Le bollandiste H. Delehaye dans "Les légendes hagiographiques," Bruxelles 1905, p. 105, relève les traits principaux qui caractérisent généralement la description d'une persécution.

"Le tableau est poussé au noir, l'empereur ou le juge y apparaissent presque toujours comme des monstres à face humaine, altérés de sang, n'ayant d'autre souci que la destruction de la nouvelle religion, et cela par toute la terre,,.

C'est bien ainsi qu'Elisée au V^e siècle met en scène le roi des Perses, Iazkert II [438 - 457] dans son "Histoire de Vardan et la guerre des Arméniens,,. Mais ce qui est plus intéressant, c'est de voir que Thomas Ardzrouni au X^e siècle, un des plus importants parmi les historiens arméniens, trace le portrait du khalife Oja'far Motewakkel [847 - 861] en copiant tout simplement l'historien Elisée. Les quelques variantes qu'on peut relever dans la seconde rédaction ne sont que des amplifications de la source.

Nous collationnons les deux passages sans autre commentaire.

Elisée, Histoire de Vardan et la guerre des Arméniens, éd. Venise, 1893, p. 12-13.

Thomas Ardzrouni, Histoire des Ardzrounis, éd. Constantinople, 1852, p. 118.

Եւ սկսաւ [Յագկերա] եղջիւր ածել անօրէնու- թեամբ, եւ գոռալով հող հանէր ընդ չորս կողմանս երկրի. եւ թշնամի եւ հակառակորդ երեւեցուցանէր իւր զհաւատացեալքս ի Քրիստոս, եւ նեղեալ տագնապէր անխաղաղսէր կենար:

Այր ոմն Զափր խրոխտ եւ ամբարհաւած եւ սկսաւ եղջիւր ածել անօրէնութեամբ, եւ գոռալով ոգութէր ընդ չորս կողմանս երկրին. եւ նեղեալ տագնապէր զխաղաղսէրս կենար. քանզի կարի սիրելի էր նմա խաղաղութիւն եւ արիւնհեղութիւն. եւ հանապաղ յանձն իւր տարակուսանք տարուբերէր:

Քանզի յոյժ սիրելի էր նմա խաղաղութիւն, արիւնհեղութիւն. վասն այնորիկ յանձն իւր տարաբերէր իւրոց. եւ կամ ուր վատեթ է յո՞ թափեցից զգառնութիւն թիւնից, կամ զբազմութիւն նետից ի կա-

Թէ յո՞վ, եւ կամ յո՞ր կողմանս թափեցէ զգառնութիւն մահաբեր թունից իւրոց. եւ կամ ուր վատեթ է յո՞ թափեցից զգառնութիւն թիւնից, կամ զբազմութիւն նետից ի կա-